ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

№ 13 03.11.2017թ.

## ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ № 6 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է `

Հաստատել համայնքի ավագանու հերթական նիստի օրակարգի հետևյալ հարցերը.

1. Զանգակատուն համայնքի 2017թ-ի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:
2. Զանգակատուն համայնքի ավագանու 25.11.2016թ-ի թիվ 23 որոշման մեջ լրացումներ կատարելու մասին:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ, ԿՈՂՄ`

| | |
|---|---|
| /ստորագրություն/ | Հ.Գրիգորյան |
| /ստորագրություն/ | Խ.Գևորգյան |
| /ստորագրություն/ | Ա.Սարգսյան |
| /ստորագրություն/ | Ջ.Մանուկյան |

Դեմ չկա, ձեռնպահ չկա

Կ.Տ.

ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` (ստորագրություն) Է.ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

N0 14-Ն 03.11.2017թ.

## ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է`

1. Համայնքի 2017թ. վարչական բյուջեի ծախսային մասի 01.1.1 <<կառավարման մարմնի պահպանում>> գործառնական դասակարգման ծախսային ծրագրի «4411 - աշխատավարձ» տնտեսագիտական դասակարգման հոդվածի ծախսի պլանը պակասեցնել 550.0 հազ. դրամով, 4111 հոդվածի ծախսի ճշտված պլանը սահմանել 11960.0 հազ. դրամ:
2. Համայնքի վարչական բյուջեի ծախսային մասի 10.7.1 <<սոց. Անապահով անձանց աջակցություն>> գործառնական դասակարգման ծախսային ծրագրի <<4729 այլ նպաստ >> տնտեսագիտական հոդվածի ծախսերի պլանը ավելացնել 300,0 հազ. դրամով, 4729 հոդվածի ծախսերի ճշտված պլանը սահմանել 1000,0 հազար դրամ:
3. Համայնքի վարչական բյուջեի ծախսային մասի 01.1.1 <<կառավարման մարմնի պահպանում>> գործառնական դասակարգման ծախսային ծրագրի <<4237 կենցաղային ապրանքներ>> տնտեսագիտական հոդվածի ծախսերի պլանը ավելացնել 150,0 հազ. դրամով, 4237 հոդվածի ծախսերի ճշտված պլանը սահմանել 350,0 հազար դրամ:
4. Համայնքի վարչական բյուջեի ծախսային մասի 10.9.1 <<սոց. Օգնության ծառայություններ>> գործառնական դասակարգման ծախսային ծրագրի <<4729 այլ նպաստ >> տնտեսագիտական հոդվածի ծախսերի պլանը ավելացնել 100,0 հազ. դրամով, 4729 հոդվածի ծախսերի ճշտված պլանը սահմանել 300,0 հազար դրամ:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ, ԿՈՂՄ`

/ստորագրություն/ Հ.Գրիգորյան

/ստորագրություն/ Խ.Գևորգյան

/ստորագրություն/ Ա.Սարգսյան

/ստորագրություն/ Ջ.Մանուկյան

Դեմ չկա, ձեռնպահ չկա

Կ.Տ.

ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` ______________ Է.ՍԱՀԱԿՅԱՆ
(ստորագրություն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

*N0 15-Ն* *03.11.2017թ.*

## ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 25.11.2016 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 23 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «իրավական ակտերի» 78-րդ հոդվածով և հիմք ընդունելով ՀՀ Վարչապետի 2017 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 02/29.7/[424963]-17 հանձնարարականը, ավագանին

## ՈՐՈՇՈՒՄ Է՝

Համայնքի ավագանու 25.11.2016թ-ի No23 որոշմամբ հաստատված՝ Զանգակատուն համայնքում 2017թ. համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը, լրացնել 14-րդ կետով՝

<<14. Համայնքի վարչական տարածքում իրականացվող աղբահանության վճարները մեկ ամսվա համար սահմանել՝

ա) բնակիչության և ֆիզիկական անձանց համար՝ 50 դրամ

բ) առևտրի /այդ թվում շուկաների/, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ մատուցող կազմակերպությունների համար՝ 1 քառ.մ 20 դրամ

գ) հյուրանոցների և հյուրանոցային ծառայություններ իրականացնող կազմակերպությունների համար՝ 1 քառ.մ 15 դրամ

դ) արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների համար՝ 1 քառ.մ 5 դրամ

ե) կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական շինությունների համար՝՝ 1 քառ.մ 2 դրամ>>:

*ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ,* *ԿՈՂՄ*

/ստորագրություն/ Հ.Գրիգորյան

/ստորագրություն/ Խ.Գևորգյան

/ստորագրություն/ Ա.Սարգսյան

/ստորագրություն/ Զ.Մանուկյան

Դեմ չկա, ձեռնպահ չկա

Կ.Տ.

ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ______________ Է.ՍԱՀԱԿՅԱՆ
(ստորագրություն)

ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ԳՅՈՒՂ ... 04101183